21008

սոցիալիզմը

Բանբասյան Ս. Գ.

Օրհորդաց դպրոց

Բաքու

373 [Բանբասյան]
Ս-30

Բաքու

1913

2010

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ՔԱՄՈՅԵԱՆ Ս. ԳԷՈՐԳ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ

*1912—1913 ուս. տարվան*

20·56

№ 2002

ԲԻԼԻՍ

Տպարան „ՀԻՊԱԼԻ" Գրաֆիկական ֆ. Ա. Ճ

1913

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

373[Քամոյան]
Տ-30

## ՔԱՄՈՅԵԱՆ—Ս. ԳԷՈՐԳ

370
380-ՏԵ

## ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ

15889

*1912—1913 ուս. տարուայ*

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Публичная Библиотека
7/XI 1922
ՄԵՍՐՈՊ. Мясникян на
Ա. ՄՅԱՍՆԻԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Գրաֆական փ. № 6
1913

8203

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## Քամոյեան Ս. Գէորգ օրիորդաց դպրոցի 1912/13 ուս. տարեայ

1) *Աշակերտուհիների ընդունելութիւնը.*— 1912—913 ուս. տարեայ աշակերտուհիների ընդունելութիւնը սկսել է օգոստ. 25-ից, իսկ սեպտ. 1-ից սկսել է կանոնաւոր դասաւանդութիւնը։

2) *Ուսուցչ. խմբի կազմութիւնը.*—1912 օգոստոսի 15-ին վերջնականօրէն իր հրաժարականն է ուղարկել տիկ. Շուշանիկ Խաժակնեանը. որոշել էր նաև բացել VI բաժանմունք. ուստի Մանկավարժական խորհուրդը ուսուցչական խմբի կազմը լրացնելու համար, ընտրել էր երկու նոր պաշտօնեաներ,—օրիորդ Հեղինէ Մեծ Բայեանին՝ հայերէնի 15 դասի համար, իսկ պ. Արամայիս Երզնկեանին՝ պատմութեան 9 դասերի համար։ Առաջինը աւարտել էր Ն. Նախիջևանի հայոց երկդ. ծխական դպրոցը. ապա գիմնազիայի քննութիւն տալ և աւարտել Մոսկվայի մանկավարժական կուրսերը, և ունէր 12—13 տարեայ փորձառութիւն երկրորդը աւարտել էր Ներսիսեան դպրոցը և ուսանել 5 սեմեստր Ժընևի համալսարանի իրաւաբանական բաժնում և ունէր 1 տարեայ փորձառութիւն։

Բացի դրանցից, որպէս VI բաժ-ի Առողջապահութեան 2 դասի ուսուցիչ, հրաւիրուել է բժիշկ պ. Եր. Մինասեանը։

Հոգաբարձութեան և Թեմական իշխանութեան կողմից հաստատուելուց յետոյ, վերոյիշեալ ուսուցիչները նոյնպէս իր ժամանակին սկսել են իրանց դասերը։

3) *Դասերի բաշխումը.*—Ուսուցչ. խումբը Սեպտ. սկզբին արդէն պատրաստ լինելով՝ դասերը վերջնականօրէն բաշխուել են հետևեալ կերպով։

1. *Գրիգոր Վարդանեան.*—

| | | |
|---|---|---|
| Հայոց լեզու՝ IV, V և VI բաժանմունքում | 14 դ. | 18 դաս. |
| » պատմ. V և VI » | 4 դ. | |

2. *Աշոտ Աթանասեան.*—

| | | |
|---|---|---|
| Բնական պատմ. III, IV, V, և VI բժ. | 12 դ. | 20 դաս. |
| Աշխարհագրութիւն՝ III, IV, V և VI բժ. | 8 դ. | |

3. *Տիկ. Շուշանիկ Խանազատեան.*—

| | | |
|---|---|---|
| Թւաբանութիւն՝ II—VI բժ. | 18 դ. | 20 դաս. |
| Գրկ. Ձևագիտ V և VI բժ. | 2 դ. | |

4. *Օր. Վարվառէ Սայաթ-Նովա.*—

| | | |
|---|---|---|
| Ռուսաց լեզու՝ II—VI բժ. | | 25 դաս. |

5. *Օր. Հեղինէ Մեծ-Բայեան.—*

| | | |
|---|---|---|
| Հայոց լեզու՝ II, III բժ. | 11 դ. | 15 դաս. |
| Իրազնութիւն՝ II բաժ. | 2 դ. | |
| Երկ. Զեռագ. III և IV բաժ. | 2 դ. | |

6. *Արամայիս Երզնկեան.—*

| | | |
|---|---|---|
| Հայոց պատմութիւն III և IV բժ. | 4 դ. | 9 դաս. |
| Ընդ. պատմ. V և VI | 2 դ. | |
| Ռուս. պատմ. V և VI | 2 դ. | |
| Բաղ. ուսում. VI | 1 դ. | |

7. *Միքայել սրկ. Տէր-Յարութիւնեան.—*

| | | |
|---|---|---|
| Կրօն՝ II—VI բժ. | 10 դ. | 13 դաս. |
| Վայելչագր. II, III և IV բժ. | 3 դ. | |

8. *Տիկ. Եղիսաբէթ Կիւրեղեան.—*

Զեռագործ՝ II—VI բաժ. 10 դաս

9. *Ալէքսանդր Միրզայեան —Նկարչ. II—VI* 7 դաս

10. *Մակար Վարդիկեան.—Երգեց. II—VI* 10 դաս

11. *բժ. Ներ. Մինասեան.—Առողջապահ VI* 2 դաս

*Ուրեմն 5 բաժանմունքում ընդամենը* 149 դաս

Բացի այս դասերից, երգեցող. ուսուցիչ պ. Մակար Վարդիկեանը երգեցիկ խումբ պատրաստելու համար էլ շաբաթը 1—2 դաս է պարապել։

4) *Դասերի տեւողութիւնը.*—Դասերը սկսւել են աշնան և ձմրան՝ առաւօտ ժամը $8^1/_2$-ից, իսկ գարնան՝ 8-ից և վերջացել ցերեկ. ժամը $1^1/_2$-ին և 1-ին։ Դասերի տեւողութիւնն է $^3/_4$ ժամ. բոլոր հանգիստները $^1/_4$ ժամ են, բացի 3-րդ հանգստից, որ $^1/_2$ ժամ տեւողութիւն ունի։

5) *Դպրոցական ծրագրի իրագործումը.*—Մանկավ. խորհուրդը ամեն կերպ ձգտել է դպրոց. իշխանութեան կողմից տրւած ծրագիրը ըստ կարելւոյն իրագործել, բայց, դժբախտաբար, ինչպէս անցեալում, նոյնպէս և այս տարի անկարող է եղել այդ նպատակին հասնել, որով և վերջնականօրէն հասել է այն եզրակացութեան, թէ մեր ծխական դպրոցների ծրագիրն ունի որոշ թերութիւններ, որոնց հարկաւոր է ուղղել. այսպէս օրինակ՝ գրեթէ բոլոր պատմական առարկաների ծրագիրը, բացի III բաժանմունքից, չափազանց լայն ծաւալ ունեն և անկարելի է անցնել այդ նիւթը նշանակւած դասերի քանակով։ Կան և այլ առարկաների մասին դիտողութիւններ։

Թեմական Տեսչի յատուկ հրահանգի համաձայն, Մանկավարժական խորհուրդը մի քանի նիստ է նւիրել ծրագրի քննադատութեանը և իր կարծիքը յայտնել թէ առաւելութիւնների և թէ մանաւանդ թերութիւնների նկատմամբ։



6) *I Բաժ.-ի փակումը եւ VI-ի բացումը.*—Դպրոցիս հոգաբարձութիւնն և Մանկ. խորհուրդը աչքի առաջ ունենալով, որ V բաժ-ը աւարտողների թիւը բաւական ստւար է և նոր խընդրատուներ էլ կան, բ) որ I բաժ-ի համար շատ դժւար է նոր աշակերտուհիներ գտնել և դասարան կազմել, քանի որ դպրոցի հեռաւորութեան պատճառով աշակերտուհիներին շատ դժւարութեամբ են ծնողները մեզ մօտ ուղարկում, գ.) Որ V բաժ. ունենալուց յետոյ անհրաժեշտ էր նաև VI բաժ. (III հին. դասարան) ունենալ, որպէսզի ըստ ծրագրի մեր դպրոցը համապատասխանէր II տիպի դպրոցներին. դ.)։ Եւ նկատի ունենալով, որ VI բաժանմունքի համար դպրոցի շինութեան մէջ դասարան չիկար, ուստի վճռեցին փակել այս տարի I բաժ-ը և նրա փոխարէն բացել VI բաժ.։

*Աշակերտուհիների քանակը.—*

Տարւայ սկզբին եղել են

| | | |
|---|---|---|
| II բաժ-ում | » | 18 հոգի |
| III » | » | 30 » |
| IV » | » | 35 » |
| V » | » | 24 » |
| VI » | » | 33 » |
| | Ընդամենը | 140 » |

Տարւայ վերջին մնացել են՝

| | | |
|---|---|---|
| II բաժ-ում | » | 16 հոգի |
| III » | » | 27 » |
| IV » | » | 34 » |
| V » | » | 24 » |
| VI » | » | 33 » |
| | Ընդամենը | 136 » |

Տարւայ ընթացքում, ուրեմն, դուրս են գնացել միայն 4 աշակերտուհի, 2-ը հիւանդութեան պատճառաւ, իսկ 2-ի պատճառները անծանօթ են։

8). *Աշակերտուհիների առաջադիմութիւնը.—*

Ուսումնական տարւայ վերջին աշակերտուհիներից դասարան

| | | փոխել են վերաքնն. | փոխել են | մնացել են |
|---|---|---|---|---|
| II—III բաժ. | 16 հոգի | — | | — |
| III—IV » | 19 » | 2 | | 6 |
| IV—V » | 26 » | 2 | | 6 |
| V—VI » | 21 » | 1 | | 2 |
| VI ից աւարտել են 27 հոգի | | 3 աւարտել են | | 3 |

Մնացողները կազմում են մօտ 12 % ընդհ. աշակերտ. թւի։

9). *Դաստիարակներ և դասարանական ընթերցանութիւն.—* Ինչպէս անցեալում, նոյնպէս և այս տարի, սկզբից հենց՝ Ման-

կավարժական խորհուրդն ընտրել էր իւրաքանչիւր դասարանի համար մի մի դաստիարակ, որոնց պարտականութիւնն էր հսկել դասարանի կարգապահութեան, հետևել աշակերտուհիների մտաւոր զարգացման և ուշադիր լինել դէպի երեխաների առողջութիւնն ու ամեն դէպքում միջոցներ ձեռք առնել բարելաւելու դասարանի ընդհանուր դրութիւնը։ Էական կարգադրութիւնների համար դաստիարակը պարտաւոր էր նախ դիմել տեսչին և կամ ի հարկին Մանկ. խորհրդին և ապա միայն կարգադրութիւններ անել։ Բացի այս ընթացիկ պարտաւորութիւններից, դաստիարակները պարտաւոր էին, իւրաքանչիւր հինգշաբթի, 6-րդ դասերին, որ զոյանում է դասերից և հանգիստներից 5-ական րոպէ կրճատելով, կարդալ իրանց դասարանի երեխաներին այնպիսի գրքեր, որոնք նախապէս Մանկավ. խորհրդի հաւանութիւնն ստացած էին։

Այս տարի դաստիարակի պաշտօն վարել են

| | | |
|---|---|---|
| II բաժ-ում | | Օր. Մեծ Բայեան |
| III » | | Տիկ. Ե. Կիւրեղեան |
| IV » | | Օր. Վ. Սայաթ-Նովա |
| V » | | Պ. Ա. Երզնկեան եւ տիկ. Դուլեան |
| VI » | | Տիկ. Շ. Խանազատեան |

Կարդացուել են տարւայ ընթացքում

| | | |
|---|---|---|
| II-ում | 16 մանկական | գիրք |
| III-ում | 12 » | » |
| IV-ում | 18 » | » |
| V-ում | 12 պատանեկական | » |
| VI-ում | 13 » | » |

10) *Տնային ընթերցանութիւն.*—Մանկավ. խորհրդի որոշմամբ, տարւայ սկզբներին դպրոցի գրադարանի թէ հայերէն և թէ ռուսերէն գրքերից յարմարագոյնները բաժանուած են եղել IV, V և VI բաժանմունքների վրայ, իսկ VI-ի համար յարմար պատանեկական գրքեր շատ չը լինելուն, գրեթէ ամբողջ դասարանը գրել ենք աւել Բար. Ընկ. գրադարանի բաժանորդ, միայն պայմանաւ, որ Մանկավարժ. խորհրդի նշանակած ցուցակից դուրս իրաւունք չունենան ուրիշ գրքեր ընտրելու։ Բար. Ընկ. գրադարանապետից ստանալով գրացուցակը՝ կազմուել էր ընթեռնելի գրքերի ցուցակը և կախուել VI բաժանմունքում։ Նոյն ցուցակը տրուած էր նաև գրադարանապետին և խնդրուել, որ նա այլ գրքեր բաց չը թող նէր. դաստիարակների և տեսչի հսկողութիւնն էլ անպակաս է եղել այս մասին. և այսպէս՝ թէ դպրոցի և թէ Բար. Ընկ. գրադարաններից վերցուած ու կարդացուած են տարւայ ընթացքում։

| | | |
|---|---|---|
| IV բաժ-ը | 300 | գիրք՝ հայերէն և ռուսերէն |
| V » | 250 | » » » |
| VI » | 300 | » » » |
| Ընդամենը | 850 | », միջին թւով ամեն մէկը 10 գիրք։ |



11) *Դպրոցի գրադարանը.*—Դպրոցիս գրադարանը տարէցտարի ճոխացրուել է. անցեալ տարի կային 420 հայերէն և 80 ռուսերէն գրքեր, ընդամենը 500 գիրք, այս տարի կան 500 հայերէն և 200 ռուսերէն գրքեր, որից մօտ 300 կտորը ուսուցիչների և առհասարակ մեծերի ընթերցանութեան համար, իսկ միայն 400-ը մանկական և պատանեկական գրքեր։

12) *Ամսագրեր և թերթեր.*—Դպրոցս պարբերաբար ստացել է „Նոր Դպրոց“ մանկավ. և «Հասկեր» մանկական ամսագրերը։ Բացի դրանցից ամբողջ տարին ստացել է Թիֆլիզում լոյս տեսած բոլոր հայերէն և ռուսերէն օրաթերթերն ու շաբաթաթերթերը։

Այն աւելացած 180 գրքերը, ստացած օրաթերթերն ու շաբաթաթերթերը նուիրել են դպրոցիս հոգաբարձու պ. Յարութիւն Քալանթարեանի կողմից։

13) *Մանկավարժական խորհուրդ.*—Մանկավարժական խորհրդի անդամներն են բոլոր ուսուցիչներն ու վարժուհիները և վերակացուհին՝ թւով 12 հոգի։ Մանկ. խորհուրդը, բացի մասնաւոր խորհրդակցութիւններից, ունեցել է 18 պաշտօնական նիստ՝ նախագահութեամբ տեսուչ Գր. Վարդանեանի և քարտուղարութեամբ օր, Հեղ. Մեծ-Բայեանի ու պ. Ար. Երզնկեանի։ Չը նայած, որ սկզբունքով որոշուել էր և հոգաբ. կողմից էլ հաստատուել՝ վճարելու քարտուղարութեան համար տարեկան առնազն 30 ր., սակայն նիւթական անձուկ պայմանների շնորհիւ, այս տարի ևս յետաձգուել է այդ որոշման իրագործումը։

Մանկվ. խորհուրդը իր նիստերի ընթացքում գլխաւորապէս զբաղուել է երեխաների մտաւոր առաջադիմութեան, կարգապահութեան, դպրոցական ծրագրի քննութեան և այլ հարցերով։ Բոլոր ուսուցիչները, գրեթէ շատ քիչ բացառութեամբ, ներկայ են եղել բոլոր նիստերին։

14) *Թեմ. Տեսչի այցելութիւնը.* Բացի հերթական նիստերից, Մանկ. խորհուրդը 2 արտակարգ նիստ էլ ունեցել է Թեմ. Տեսուչ պ. Յ. Տէր-Միրաքեանի *) մասնակցութեամբ, լսելու նրա այցելութեան հետևանք եղող նկատողութիւններն ու տալու հարկ եղած բացատրութիւնները։ Թեմ. Տեսչի նկատողութիւնների համար կայ յատուկ մատեան, ուր և արձանագրուել են թէ տեսչի նկատողութիւնները և թէ ուսուցիչների տուած բացատրութիւնները։

15) *Ներկայացում, երեկոյթ.*—Սոյն տարւայ ընթացքում, երեխաների ընդհանուր զարգացմանը նպաստելու և նրանց հոգեկան զարգացութիւն պատճառելու համար, դպրոցիս վարչութիւնը (Հոգաբարձութիւնն ու Մանկ. խորհուրդը) բարեկենդանի տօներին,

*) Թեմ. տեսուչ պ. Յ. Տէր-Միրաքեանը 2 ամբողջ օր այցելել է մեր դպրոցը, լսել գրեթէ բոլոր առարկաներից դասեր, և տեսել է գրաւորները։

Բար. Ընկ. դահլիճում կազմակերպել են մի աշակերտական ներկայացում՝ գրական, երաժշտական և պարային բաժիններով, ուր, բացի աշակերտուհիներից՝ ներկայ են եղել են դպրոցիս հոգաբարձուները, և՝ շատ ծնողներ։ Աշակերտուհիներին տրված է թէյ, պանիր կամ կալբաս և մեկնելիս ամեն մէկին մի թղթէ տոպրակով մրգեղէն ու կանֆետ։

Բացի այդ, ըստ հրահանգի Թեմ. Հոգ. իշխանութեան, դպրոցում, հոկտ. 13-ին (1912 թ.) կատարել է Հայոց տառերի գիւտի 1500 ամեակի և Հայ տպագր. 400 ամեակի յոբելեանի բացման հանդէսը։

Իսկ դպրոցից դուրս երեխաները տարել են Բար. Ընկ. սարքած ցերեկոյթին՝ Ժողովարանում, ինչպէս և Ուս. Մ. մանկ. ցերեկոյթին։

16) *Էքսկուրսիաներ* —Մանկ. խորհուրդը ինկատի ունենալով էքսկուրսիաների անչափ օգտակարութիւնը մտաւոր զարգացման գործում, ոչ մի ջանք չէ խնայել կազմակերպելու էքսկուրսիաներ։ Այսպէս օրինակ՝ IV բաժ-ը տարել է Հալլարարում եղած կոյրերի վարժարանը, V և VI-ը Էնֆիաջեանցի ծխախոտի գործարանը, II, III և V բաժանմունքները բոտանիքական այգին, իսկ V և VI բաժանմունքները ամբողջ օրով, իրանց ուսելիք-խըմելիքով Օբրոդանա գիւղը։

Մանկ.խորհուրդը թէև տարուայ սկզբից ծրագրել էր VI աւարտական բաժանմունքը տարուայ վերջին (Յունիսի սկզբներին) տանել Էջմիածին, Անի և այլն. սակայն, նիւթական սղութեան պատճառով թէև այդ անկարելի եղաւ իրագործել, բայց իրագործուեց մի այլ ծրագիր և հոգաբարձութեան նպաստով ու երեխաների դրած գումարով՝ VI բաժանմունքի մօտ կէսը, 16 աշակերտուհիներ տարուեցին Այլահվերդու պղնձի հանքերը, Սանահին և Հաղբատ՝ հայրենի և պատմական վայրերն ու վանքերը դիտելու։ Էքսկուրսիան անցաւ անվտանգ և յաջող ու տևեց ընդամենը 4 օր։

17) *Աշակերտուհիների առողջապահական վիճակը.*—Դպրոցը այս տարի ևս ունեցել է իր սեփական բժիշկը (պ. Ե. Մինասեան), որ այցելել է դպրոց և քննել երեխաների առողջութիւնը, կազմել է վիճակագրութիւն, որից հեշտութեամբ կարելի է իմանալ երեխաների հասակի զարգացումը, կշռի աւելանալը, արտաշնչման և ներշնչման կանոնաւորութիւնը, տեսողութեան որպիսութիւնը և այլն։ Այս վիճակագրութիւնը յատուկ մատեանում արձանագրուած է։ Պ. բժիշկը մշտապէս ընդունել է իր տանը մեր երեխաներին ու իր ցուցմունքներով, խորհուրդներով և նշանակած դեղերով օգտակար հանդիսացել։ Խինինը դպրոցի կողմից ձրի է տրուած։ Դպրոցում տարուայ ընթացքում վարակիչ հիւանդութիւններից գրեթէ ոչ մի երեխայ չէ վարակուել։ Աշակերտութեան



մէջ խիստ աչքի է զարնում սնունդի պակասութիւնը, ինչպէս նաև հագուստների աղտոտութիւնը։ Մալարիան, արեան պակասութիւնը այս տարի ևս զգալիօրէն նկատելի են։

18) *Ուսումնական պիտոյքներ.*—Դպրոցի էական պահանջներից մէկն էլ, անշուշտ, այն ուսումնական պիտոյքներն են, որոնք նպաստում են ուսուցչին առարկան հարկ եղած լրջութեամբ անցնելու. սակայն, դժբաղդաբար, այդ կողմից մեր դպրոցը չափազանց շատ պակասութիւններ ունի։ Կարող է, օրինակ, բնական պատմութեան ուսուցիչը անցնել լիակատար իր առարկան, առանց իր ձեռքի տակ ունենալու մարդու, կենդանիների կմախքները, բոյսերի ու հանքերի հաւաքածուները և կամ գէթ սրանց նկարները. այսպէս և միւս բոլոր առարկաները։ Ու մեր դպրոցում, ինչպէս ասացինք, բացի մի քանի քարտէզից, նկարներից ու գիպսերից՝ գրեթէ ուրիշ ոչինչ չկայ. ուսումնակ. պիտոյքների կատարեալ սով է։ Կըսպասէր, որ մեր ինտելիգենտ ունեւոր ծխականները մտածէ՛ն այդ մասին և փոքրիկ նուէրներով լրացնէին այս շատ զգալի պակասը։ Պիտի աւելացնենք, որ դպրոցիս նստարանների մեծ մասը նահապետական ժամանակներից մնացածներ են և միանգամայն անպէտք ժամանակակից դպրոցների համար։ Ցարգելի ծխականների մասնաւոր ուշադրութիւնն ենք հրաւիրում յատկապէս այս շատ էական թերութիւնների վրայ, որոնք սակայն քիչ զոհաբերութեամբ կարող էին լրացուել։

19). *Աշակերտուհիների ընդհ. վիճակագրութիւնը.*—Մանկ. խորհուրդի որոշմամբ և դաստիարակների միջոցով կազմուել է աշակերտուհիների ընդհ. վիճակագրութիւնը, որը ցոյց է տուել հետևեալ պատկերը։

140 աշակերտուհիներից՝
103 աշակերտուհի ծնողք ունեն
37 » որբ
81 » Թիֆլիզցի
59 » Գաւառացիք (կան Տաճկահայեր և Պարսկահայեր էլ)

Բնակարանները մեծ մասամբ 1 սենեակից է բաղկացած, ապա 2, 3 և շատ քիչերը՝ 4—5 սենեակ ունեն։

Տան վարձ վճարում են 3—13 ր. միջին թւով 6—7 ր. ամսական։

Ծնողների մեծ մասը պարապում են արհեստներով, 6—7 հոգի առևտրականներ են, մօտ 30-ը անգործ են։

Աշակերտուհիների մեծ մասի նախաճաշն է թէյ և հաց, հաշը 1—2 տեսակ, իսկ ընթրում են կերակրով՝ ընդամենը 20-ը, մնացեալները թէյ, հաց, պանրով են ընթրում։ Կարագ. ձու շատ քչերն են գործածում։

20). *Ուսուցիչների բացակայումը.*—Տարւայ ընթացքում բացակայել են։

| | | |
|---|---|---|
| բժ. Մինասեան | 2 դաս | Փոխարէնը պարապել են 125 դ. |
| Ա. Միրզոյեան | 8 » | |
| տ. Ե. Կիւրեղեան | 8 » | |
| Մ. Վարդիկեան | 13 » | |
| Մ. սրկ. Տէր-Յարութիւնեան | 18 » | |
| Վ. Սայաթ-Նովա | 19 » | |
| Գ. Վարդանեան | 24 » | |
| Ա. Աթանասեան | 28 » | |
| տ. Վ. Խանազատեան | 36 » | |
| Ար. Երզնկեան | 50 » | |
| Ընդամենը | 206 դաս | |

21). *Ուսման վարձ.*—Ուսման վարձը 3 կատեգորիա է եղել. 6, 10 և 15 ր.

136 աշակերտուհուց 6-ական բուբլի տալու են 24 հոգի
10-ական » » 25 »
15-ական » » 48 »

Ուրեմն թոշակաւորներ եղել են ընդամենը 97 հոգի. իսկ մնացեալ 39 հոգին ձրի են սովորել։ Զը նայած այս որոշեալ նորմաներին՝ պիտի ասել, որ եղել են բաւական աշակերտուհիներ, որոնք լրիւ չեն տուած իրանց ուսման վճարը։

22). *Օգնութիւն չքաւոր երեխաների.*—Բարեգ. Ընկ. ձրի ճաշարանում ճաշել են 8 հոգի.

Ձրի գրքեր, տետրակներ և այլն մատակարարել ենք 7 հոգու։

Պարտք են համարում յայտնել, որ մեր ծխական պ. Համբարձում Մելիքեանը ծննդեւյան տօների առիթով 50 ր. է նուիրել մեր չքաւոր երեխաների համար, որով 11 աշակերտուհու համար ամբողջ շոր, 19-ի համար ֆարտուկ է կարուել, իսկ 3-ին էլ կօշիկ է գնուել։

23). *Հոգաբարձական այցելութիւններ.*—Բոլոր հոգաբարձուները տարւայ ընթացքում այցելել են դպրոց և հետաքրքրուել դպրոցի գործերով ու լսել դասերը։ Տարւայ վերջին գրեթէ բոլոր ստուգումներին ներկայ է եղել բժ. Բ. Աղասարեան։

Թամոյեան օրիորդաց դպրոցի Տեսուչ՝
Գ. Վարդանեան.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Բ.Հ. Публичная Библиотека
7/XI-1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

21008
2013
<< Ազգային գրադարան
NL0054822